

Բարբիլոնի ստնն ամրագոյն գլ. քանդի խորո-
վեալ աղիւսով եւ հայեալ կարով եղեւ շի-
նեալ (հսն. էջ 23.) Իսկ Եւսեբիոս Բարսիկոնի
Թարգմանիչն յուշաբեւեւ «τὸς μὲν ἐξ ὁπῆς
πλινθίου καὶ ἀσφάλτου, τοὺς δὲ ἐξ ἀστῆς τῆς
πλινθίου» կը գործէ «եւ զկէսն ի պարսպացն
ի Նիւթծուն աղիւսոյ եւ ի Նաւթէ շինէր, եւ
զկէսն ի լոկ աղիւսոյ» (Քաղաւածոյք ի Մատեն-
ապ. Դ. Կ. 368—9.)

Կը վերջանանք քննութիւննս Կոնստի-
այո Թարգմանութենէն Հատուած Ժ՛ի մէջ բե-
րելով. որմէ լուսագոյն կրնան իմանալ ընթեր-
ցողք ընդունի եւ Թարգմանութեան վիճակը.

Յաղագս Միթրոսի: Միթրոս կարն առ ի Պար-
սից արեգակն գլ., եւ զիս առնին նմա եւ տունն
կուտարին: Արդ՝ ոչ կարէ սք ձաւնել ի նմա, եթէ ոչ
յառաջագոյն ընդ աշխոյժս տալարեանց անցանիցն:
Եւ աշխոյժսն ի նն թուով ութնուն, ունելով նուա-
զս: Թիւն եւ առաւելութիւն, եւ տանջին յառաջ-
գոյն Թեթեւագանիւնն եւ աղա զտարաբանիւնն.
Եւ յետ անցանից ընդ ամենայն ասնշանն՝ լինի կա-
տարեալ, որ կատարելոց իցէ: Իսկ տանջանք ընդ
հօտ անցանել, ընդ առանձանիսն, ընդ քաջ, ընդ եր-
կայն անաւարտս: Եւ ընդ ծով քնայ, եւ պարզաբար՝
ընդ ամենայն պարսիկ գիւտարութիւնս: (էջ 28.)

Այս է ընդհանրապէս ռը, որուն նման
օրինակներ շատ քիչ կը գտնուին միւս Թարգ-
մանչաց քով: Եւսեբիոսի Հետ Համաձայնու-
թիւնն ամէն Հատուածի Համար Հաւասարապէս
չենք կրնար բնել: * Ն. Ա.



Պ Ա Յ Ս Ա Կ Ա Ն

ԵԼԻՍԱՐԹԱՐԳՈՒՍԱՅ ՄԵՆՆԱԳՐԱՐՈՅ —
ՍՍՐՔ ԵԼԻՐԱԹԵՆ ԶԵԼԻՔՆ ԵՆՆԵՆԻՔ

Բայց երկու տարւոյ մը չափ անցաւ, միւ-
շեւ որ քաղաքային վարչութիւնը՝ Հիմնարկու-
թեան Հաստատութիւնն ընդունեցաւ: — Կե-
րեալ թէ քաղաքային խորհուրդն ու Հաստ-
աւարութիւնը շատ անհամբարութեամբ կը
սպասէր առ բանիս: Որովհետեւ յաջորդ ու-
սումնական տարւոյն սկիզբը Համոզեց զՆերկիս
Զիգրիան օգնական քահանան, որ միւշեւն ար
Հաստատութիւնը գայ ու վարժողը բացօր-
ի, յանձն առնու առժամանակեալ կերպով, Հաս-
տատուելի առաջին դասին դասախօսութիւնը: —
Զիգրիան՝ միտեալ էր առ բանիս: Ան աստն
խորհրդանոցն եղածը՝ Բովսէփ Բօրայեան աւա-
գերիցուն գրով Հաղորդեց, աղաչելով միւսն
գամայն որ բարեհաճի իր օգնական քահանային
Հրաման տալ, որ աս պաշտօնն առժամանակեալ
կերպով վարէ: Բօրայեան, սիրով Հրաման
տուաւ, եւ քաղաքն անմիջապէս կանգնեց վար-
ժարանին առաջին դասը:

1843 Փետր. 12ին Հասաւ Կրանսիլուա-
նիոյ վերին կառավարութենէն Եղիսարեթու-
պօղոյ վարժարանին Հաստատութեան պատճէնը:
Եւ որովհետեւ ասոր մէջ կառավարութիւնը՝
Հրաման կու տայ, որ ուսուցիչներուն աթոռները
լինուին՝ Մէլքեսանգր Բափայէ Հիմնարկու-
թեան թղթին զօրութեամբ՝ անուանեց առա-
ջին երեք ուսուցիչներն, որոնք՝ ուսումնական
տարին եկածին պէս, սկսան իրենց գործունեու-
թիւնը: Մնացին զատուս մէջ ուսուցիչ եղաւ
Գրիգոր Ցալպուզագեան, երկրորդին մէջ՝ Ան-
տոն Խիգուցեան: — Վարժարանին վերահսկողն
էր Եւզինէոս Տանիէլեան, քաղքին գլխաւոր
գատարոր:

Վարժարանին առաջին տարւոյն գործու-
նեութեանը վրայ տեղեկութիւն տալու ի վիճակի
չենք: Բայց կը տեսնենք, որ ուսումնական տար-
ւոյն լիննալովը՝ Կրանսիլուանիոյ կառավարու-
թիւնը, զլուր. Բայիշը, Գարսպուրի կանանի-
կոսը — Կրանսիլուանիոյ դպրոցաց վերատու-
սուլը — իրենց Եղիսարեթուպօղոս, որ Հոն
տեղի ուսուցիչները քննէ ու տեսնէ թէ, ունի՞ն

5 Ճառերի Նոնոսիս վերաբրուած մեծնութիւննոր
վերաբրումը որոշ հիմքեր կան ննթադրելու, որ այդ
գրուածքն եւս այն իրավիճակն է, եւ այդ ննթոր մասին
դեռ առանձին խօսելու ենք» (անդ էջ 167—68):

1 Այս Հատուածը յառով բերած է նաեւ Հ. Գ. Սե-
լանի Խ. Դ. Հատար Հայոցի երկին մէջ (Պետեմ. 1895,
էջ 284):

2 Թ. τειλεας, զոր ար Թարգմանիչն երբեք «ձե-
սուեալ», եւ երբեք «անգիտա» կը փոխէր: Սեյ. Զուրի «Կա-
տարեան»:

3 Թ. τειλοσθηνου.

4 Թյւնը կը յաւելու. «տանջանց»:

5 Թ. ὑποβασιον καὶ ἀναβασιον.

6 Զ. քեթեւագանիւն... գիւտ արագանիւն:

7 Թ. ծիւ մծուտեղառն սոլլից — ընդ երկայն անաւա-
պարհորդութիւնս:

8 Թ. Զուրի:

* Միտութիւնս ամբողջապէս զրած յանձնած էինք
արդէն «Հանդիսի» խմբագրութեան եւ մասամբ (Ա
մասն ամբողջապէս եւ մնացածներուն Pelik դրոշ-
մաւորներն) սքրազրած, երբ ստացանք Աւրել Յիւ
Արարատայ տարւոյն Բ. Թիւր, ուր Թարգ. Թ. Մա-
նուդեան լուրջ ուսումնասիրութեամբ մեզ կը քննէ
գիտելի Կարացի: Թողութեանը երկու ամսաւարու-
թիւն կը համարի գիտելի Այալաթ եւ Կարացի, եւ
վերջինս կու տայ «ընդդէմ՝ Պիտոնի եւս (տես վերը
էջ 167) գրութիւնս, ծանօթ է Թողութեանը նոյնին
յուշարձնը նոյնպէս Պրոք. Կոնիսիցի քննութիւնն:
Տեստարգրական է յօդուածն շարունակութիւնս եւս:
Հետ այսմ՝ իմանալու է վերը էջ 168 ըստծոյն: Նոնոսի
նկատմամբ կը կարողանք նոն. «Գր. Աստուածաբանի

պատշաճ ընդունակութիւն տրվեցընելու, եւ զննէ միանգամայն վարժոցն՝ ամէն նկատմամբ: Կանոնիկոսը՝ քննեց, ու պահեց երեք ուսուցիչներն իրենց պաշտօնին մէջ: — Ասոր հետեւութեան իրենց 1844 զեկա. 27ին, Եպիսկոպոսէն ու կառավարութենէն ընդունեցան իրենց վերջնական հաստատութիւնը: — Երեք ուսուցիչներէն զատ, Էմերիկոս Չփփ. օգնական քահանան կը սորվեցընէր կրօնագիտութիւնը, զոր Պր. Ռաֆայէլ. — Գովաշ Եպիսկոպոսին փափաքանաւոր համեմատ — անուանեց կրօնագիտութեան ուսուցիչ:

Յարորդ տարիները պատահաներուն, ինչպէս նաեւ վարժարանին գործառնութեանցը վրայ՝ շատ քիչ բան գիտենք: Եղիսաբէթուսկոյ շէնքն ուստան մեծագոյն մասն 1848 եւ 49ին խառնակութեանց ժամանակներուն մէջ, ըստ մասին կորսուեցաւ ըստ մասին փշաջաւ. որովհետեւ աւստրիական ու հունգարական բանակները եւ ինչպէս տեսնք վաղք խառնաժամ ու ետքէն ուսները քաղաքը տակն ու վրայ բրին եւ քանի մ'անգամ կրակի տուին: Վարժարանին վրայ բոլոր բոլոր գիտցածնիս ան է, որ Նիկողայոս Գովաշ Եպիսկոպոսը՝ հրամանագրով մը կը ծանուցանէ քաղաքային դպրոցական վարչութեան, որ տակն ետքը ընտրուած ուսուցիչներն, իրենց ղեկները քննութեան տակ ձգելու են, իրենց ընտրութենէն գոնէ երկու տարի ետքը: — Ամենէն երեւելի ու մտաբերութեան արժանի բանն ան է, որ դպրոցաց վերին հսկողութիւնն ունեցող Եղիսաբէթուսկոյ չայածէս գաւառական ժողովքը՝ Աղջքս. Ռաֆայէլի ներկայութեամբն ըրած ժողովքին մէջ կը սահմանէ որ՝ «Ս. Անտոնի կոչուած պատուական հայրերը, պարտական են, հինգ տարին ընդընտր տղաքը՝ հայ դպրոցն ընդունելու: — Էն թէ մինչեւ հիմա, միայն եօթը տարեկան եղանակները, Աս հրամանին պատճառն ալ կը տրուի. — «որպէս զի չըլլայ թէ վարժարանէն ետ մնան, վասն զի հայերէն սորվիլ պէտք է, ու առանց հայրերէն գրել ու կարգալ գիտնալու՝ տղաք վարժարան չեն ընդունուիր»: — Այս կարգադրութիւնն, ինչպէս նաեւ ան, որ հայերէն լեզուն իրեւ պարտաւորիչ նիւթ պէտք է սորվուի, ինչպէս յայտնի է, միայն տեղացի աղգայնոց համար էր: Օտարներն, ազատ են:

1848ին խռովութեան ժամանակներն Եղիսաբէթուսկոյ վարժարանին մէջ, սորվեցընելը դադարեցաւ: — Այսպէս գնաց մինչեւ 1853: Խառնակութեան ժամանակներն անցնե-

լէն ետեւ՝ քաղաքային հասարակութիւնն ի վիճակի չեղաւ վարժարանն անմիջապէս բանալու: — Սարդին դպրոցներն ալ՝ այս միջոցին շատ խնձր վիճակի մէջ պէտք է որ եղած ըլլան. որովհետեւ անոնց մէջ ալ մի միայն վարժապետ մը, Յովհ. Բաբեան կը սորվեցընէր: Եպիսկոպոսն, իր մէկ թղթին մէջ, զոր Յովհնի Բաբայեան առագերիցուն իրեւ զգրոցական վիճակին վերատեսչին ուղղած էր, զարմանալով կ'ըսէ, թէ, դադարած Ռաֆայէլեան վարժարանին ուսուցիչներն, առանց գործի կը վայելէն իրենց եկամուտն, ուր ընդ հակառակն, տարրական դպրոցներուն ուսուցիչները՝ թէպէտ կը գործեն, բայց անօթի են:՝ Ուստի կը հրամայէ Բաբայեանին, ուր քաղաքային վարչութեան հետ բանը յարմարցընելով, վարժարանին ուսուցիչները՝ տարրական դպրոցներուն մէջ գործեն, վասն զի առ վիճակն ալ չի կրնար տեսնել, Եպիսկոպոսին սոք կոխեն ան օգուտն ունեցաւ, որ Եղիսաբէթուսկոյ քաղաքային ու եկեղեցական խորհուրդն սկսաւ ծանրութեամբ մտածել վարժարանին վերականգմանը վրայ: Աս բանիս հետքերը կը տեսնենք Բաբայեանի տեղեկութեանցը մէջ:

Բայց իրական հետեւութիւն միայն Հայնալտ Եպիսկոպոսին ժամանակը տեսնուեցաւ: — Ինք՝ իմանալով քաղաքին փափաքը՝ շուտ մը Եղիսաբէթուսկոյն անկուեցաւ, եւ մասնակից եղաւ քաղաքային հասարակութեան 1853 մայիս 8ի ընդհանուր ժողովին: Աս խորհրդին մէջ, միաբանեցան վարժարանին Նոր կազմակերպութեանը եղանակաւորութեանցը վրայ: — Որովհետեւ Ռաֆայէլի հիմնարկութեան եկամուտը բաւական չէր վարժարանին ելքերը գոցելու, որոշուեցաւ՝ որ քաղաքը, պակասածը Գեդեգ Գամլլէրեան կտակին մէջ թողուցած ձեռնայի եկամուտներին ամբողջոցնէ՝ քաղաքը խոստացաւ, որ վարժարանին չէնքին պահպանութիւնն իր վրան կ'առնու եւ հոգ կը առնի վաճելու փայտին. ասկից զատ ուսման կարելորդ եղած սպաններն ու կազմածները կը հոգայ: — Իսկ Հայնալտ խոստացաւ՝ որ ամէն կարելի օգնութիւնը կ'ընէ քաղաքին. ու ե՞լի կարելի է, կը յաջողցընէ, որ Ռաֆայէլեան հիմնարկութեան մնացած շահերէն, համապատասխանող գումար մը տրուի, վարժարանին առաջին կաթողութիւնները լեցընելու համար: — Քաղաքն՝

1 Professores sublati gymnasii Raphaeliani otiosi salarium percipiunt; docentes normales locales tabo-
rantes esuriunt.

ի շնորհակալութիւնն ասոր, Դրանսիրուանիոյ եպիսկոպոսին շնորհեց՝ ուսուցիչներն անուանելու եւ հաստատելու իրաւունքը, զոր՝ մինչեւ այս ժամանակ — հիմնարկութեան թղթին հինգերորդ կէտին համեմատ — թաղաւորական վերին կառավարութիւնը կը գործողեր։ Աս իրաւունքը՝ Դրանսիրուանիոյ եպիսկոպոսները գործածեցին, մինչեւ որ վարժարանը տեւուութեան ձեռքն անցաւ։

Հայնալտ՝ խնդիրը կառավարութեան առջեւ դրաւ, իսկ ասիկայ՝ տեւութեան պաշտօնարանին։ — Քաղաքը՝ 1853 սեպտ. 2ին ըրած աղաշնանց թղթովը, նորէն խնդրեց որ դպրոցական տարին սկսելու ատեն, գնեւ առաջին դասը կարենայ բանալ։ Եպիսկոպոսն՝ աս բանն կառավարութեան հաղորդեց, ու միեւնոյն միջոցին գրեց Եղիսարեթուպոլսոյ քաղաքային խորհրդին, որ հաստատել վարժոցին համար պատրաստեւ տեղերը։ Իսկ հոկտ. 6ին տեղեկացուց զգաղաքն, որ մասնաւոր (privat) վարժարանի վր հրաման արուեցաւ, եւ թէ առժամանակեայ կերպով անուանուած երկու ուսուցչով — Յակովբ Մարգովէշանով եւ Գրիգոր Յայպուգագով — կրնայ սկսիլ իր պաշտօնը (Function)։

Վարժոցը՝ մարապետաց հիմնական վանքին — հին եկեղեցւոյն հրապարակին չէնքին մէջ 1863 հոկտ. մէկին սկսաւ իր գործունէութիւնը։ Առաջին երկու դասն ունէր ընդ ամէնը 16 աշակերտ։ Հոկտեմբեր 24էն ի վեր երրորդ ուսուցիչ մըն ալ — Յովհաննէս Էօզփէշեան — կը գործեր։

Ուսուցչաց դրամական խնդիրը՝ թէ քաղաքային վարչութեանն ու թէ եպիսկոպոսին բաւական մտածելու բան տուաւ։ Ի սկզբան ուղղեցաւ, որ իրենց տարեկան հասցթն ըլլայ 400 ֆիորին, ընկանապակե՝ կառավարութեան օգնութեամբը։ Սակայն տեւութիւնը՝ քաղքին փափաքը չկատարեց։ Մարգովէշանն եւ Յայպուգագոսեան 300ական ֆիորին, իսկ Էօզփէշեան 250 ֆիորին կ'ընդունէր։ — Որպէս զի քաղաքն, ասոնց նիւթական վիճակը քիչ մը թեթեւցընէ, քաղաքային վարչութիւնն զգլխաւոր դատաւորը Վիեննայ խրկեց, որպէս զի գամէլլերեան տունը ծախել եւ ասոր եկամտէն խոստացուած վճարը կարենայ քովէ քով բերել։ Բայց մինչեւ որ աս ըլլայ իրենց գիրքին այնպիսի կերպով վճարեց օգնել, որ եպիսկոպոսին եւ կառավարութեան հաւանութեամբը 1854—55 ուսումնական տարւոյն մէջ, երեք

ուսուցիչներն՝ երեք դասը սորվեցընեն ու չորրորդ ուսուցչին 300 ֆիորինն իրենց մէջ բաժնուի։ Ասանկ գնաց երեք տարի թէպէտ եւ ուսուցիչք շարունակ կ'աղաչէին, որ չորրորդ դասն ալ սկսուի եւ ուսուցչաց թիւն ալ բարձրացուի։ Սակայն ի զուր։ — Այսպէս մնաց ամէն բան, թէպէտ եւ քաղաքն, առաջարկեց, որ Վիեննայի տան եկամուտէն 850 ֆիորին կուտայ վարժարանին պահպանութեանը համար։

Վարժոցն՝ որ կառավարութեան հրամանով Եղիսարեթուպոլսոյ Ռափայէլեան լատին դպրոց (Elisabethopolitana schola latina Raphaelina) անունը կը կրէր, մասնաւոր դպրոց մնաց։ Սկզբան եղած Ծանրութիւնները՝ մնացին անկից ետքն ալ, թէ ուսումնական կազմածնեւում եւ թէ որեւէ կարեւոր բաներու կողմանէ։ 1856ին մեռնող Բօքայեան աւագերիցուն տեղ եկաւ Էմիլիոս Չիգի, որ — արդէն իր հոգաբարձութեանն ատեն, վարժոցին նկատմամբ շատ գործած էր — նոր շարժում եւ զօրութիւն տուաւ դպրոցին։ Ստոյգ է, որ իր գործունէութեան սկիզբը՝ հարկ եղաւ, որ մէկ կողմանէ դպրոցին վերատեսչին ու կառավարութեան եւ մէկալ կողմանէ, իր եպիսկոպոսին հետ դիմացէ դիմաց կենայ։ Վասն զի եպիսկոպոսը՝ կառավարութեան գործելովը՝ հրամայեց որ կրնաքտութիւնը գերմաներէն լեզուաւ սորվեցուի։ Ուսուցիչք աղաչեցին, թէ հրեան տեսակ նիւթ, եթէ հարկ է, սիրով կը սորվեցընեն գերմաներէն լեզուով՝ բայց կրօնագիտութիւն՝ սորց մայրենի լեզուով կը փափաքին սորվեցընել։ Չիգի՝ աս բանը պաշտպանեց. ու հարկ եղաւ, որ եպիսկոպոսը զիջանի։

Չիգիեան չհանգչեցաւ, մինչեւ որ չլաւջողցուց, որ միշտ խոստացուած ու երբեք չգործադրուած հինգերորդ ուսուցիչն ալ խոստացուեցաւ։ Վարժարանին։ Իրեն աշխատութեանցը պէտք է շնորհակալ ըլլալ վարժոցն, որ վերջապէս ուսուցիչներուն հասցթը քիչ մըն ալ բարձրացաւ։ — Թեպէտ ասոր վրայ՝ Մարգովէշեան նոր վերափոխուչը՝ 1855ին չորրորդ դասին կանգնուեմ՝ եւ իրեն համար 450 ֆիորին իսկ մէկալ երեք ուսուցչաց համար՝ 400, 300 ու 250 ֆիորին վճարք խնդրեց, բայց կառավարութիւնը չընդունեցաւ խնդիրը։ — Ասոր տեղ՝ իրեն փոխարինութիւնն ան եղաւ, որ երկու տարի ետքը՝ եպիսկոպոսն իրեն շնորհեց Եղիսարեթուպոլսոյ լատին Ժողովրդապետութեան հոգաբարձութիւնն ու միանգամայն անոր հետ կապուած եկամուտները։

Ուսուցիչներուն վճարքն ալ այնչափ լաւացաւ, որ Գամելլերեան Տիմարկութեան օգնութեամբ երեք ուսուցչին Տասնյժը Տարիւրական ֆիրմինով լաւացաւ: Ասանկով՝ իրենց տարեկան վճարքն եղաւ 350 ֆիրմին: — Եաջորդ տարին վերջնական կերպով կարգադրեցին ուսուցիչներուն եկամուտն, այնու որ վարչին վճարքն եղաւ 500 իսկ կարգաւորեալ ուսուցիչներուն 420 ֆիրմին: — Ասանկ ճիշտց մինչեւ 1885:

Եթէ այս միջոցին, դպրոցին ներքին վիճակը դիտենք, զանկայ բաւական պակասաւոր կը գտնենք: Եւ սակայն — դպրոցաց, այս օրանս Տանդերձարութիւնը նկատելով՝ հայր է որ զարմացմամբ մը մենք մեկն Տարջընենք, թէ ինչպէս կարելի էր, ասանկ ողորմելի յարաբերութեանց մէջ՝ այսպիսի արդիւնաւորութիւն ցուցնել: — Ցարակցոյ չկայ, որ ուսման արդիւնքը՝ վճացուցիչ պէտք ենք ըսել, որովհետեւ ասոր փոյլ կն, ան դպրոցէն ելած աշխրաններուն երեւելիներն, որոնք՝ մեծ դեր կը խաղան այս օրանս օրս կենաց ասպարիզին մէջ: — Ուսուցիչները՝ պակաս եղածը՝ լեցուցին իրենց եւուրդով: Մարգովիչեան վերանսուլը՝ վերջի ասորիճանի անձնանուիրութեամբ ու բոլոր ուժովն աշխատեցաւ դպրոցին զարգացմանը: Ա՛յս կերպով Տասան, այն անՏաւատալի Տեւտութեան:

Դպրոցին անունն է այս միջոցին Schola privata latina Raphaelina. Դրամագլուխն (Fundus) է, Ռաֆայելեան 900 ֆիրմին եկամուտն, եւ Գամելլերեան Տիմարկութեան 850 ֆիրմին օգնութիւնը: Ընդ ամենը 1750 ֆիրմին:

Վարժարանն՝ ասկից ետքը Անտոն Մարգովիչեան աւագերիցուն եւ եպիսկոպոսական յանձնակատարին Տարհակոյրութեանը տակ, կրօնի եւ Տամակրթութեան պաշտօնարանին առընթերակացութեամբ սկսաւ աւելի յաջող գործունեութիւն արտադրել: Ուսանողներուն թիւը՝ թէպէտ կամաց, բայց միշտ աճելու վրայ է: 1868/69 տարւոյն մէջ՝ 34. — 1869/70 տարւոյն մէջ 38 է: — 1873ին, Մէսսորոջ՝ պաշտօնարանին երեսփոխանը՝ կը խրկուի Դրանսիոյ անիա, որպէս զի ուղղափառ վարժարաններուն վիճման ուսումնասիրէ աւ քննէ, եւ անոնց վրայ տեղեկութիւն տայ պաշտօնէին: — Տրուած տեղեկութիւնները՝ շատ նպատաւոր չին Եղիարեւելոյ վարժարանին վրայ:

Հասարակութիւնն 1881ին սկսաւ ժառնել վարժարանին արմատական փոփոխութեանը

վրայ, եւ ջանալ՝ որ Դրանսիոյանից եպիսկոպոսին ձեռնառութեամբ, վերին կամ գլխաւոր վարժարան ըլլայ: Աս իմաստով՝ 1881 յուլիս 8ին կը խնդրէ իշխանութենէն, որ պահելով վարժարանին ուղղափառ նկարագիրը՝ զանկայ գլխաւոր վարժարանի դարձնէ — այն Տիման վրայ, որ Տիման վրայ որ Դրանսիոյանիցի ուսիլի դպրոցները դրուած՝ կեցած են: Այսպէս եպիսկոպոսը կը ծանուցանէ, որ քաղքին կողմանէ նուիրուած օգնութիւնը բաւական չէ վերին վարժարան մը կանգուն պահելու Տամար, — իսկ Դրանսիոյանից ուղղ. եկեղեցական ստացուածոց դրամագլուխն ան վիճակի մէջ չէ, որ վերին նոր վարժարանի մը, այնչափ նպաստ մատուցանէ: — Ար զգուշացնէ միանգամայն, զքաղքային երդուեալ Տասարակութիւնն, որ եթէ իր նպատակին Տանելու Տամար, ինք զինք տերութեան կարգադրութեանը տակ ձգել եւ այս ձամբով Ռաֆայելեան Տիմարկութիւնը, Տուովմեական կաթողիկէ ուղղութենէն փոխել ուզենայ, Տիմարքին կամացը Տեւ Տակաւակախտութեան մէջ պիտի գայ, որ բանին որ եպիսկոպոսն ամենեւին պիտի չզիջանի: Աւելի պատշաճ կը Տամարի եպիսկոպոսն, որ երդուեալ Տասարակութիւնն՝ եղած ստորին վարժարանն, արդի ժամանակին պահանջմանցը Տամմաւ կարգադրէ: որովհետեւ, կարգաւորեալ ստորին վարժարան մը՝ քաղքին յարաբերութեանցը բոլորովին կը Տամապատասխանէ:

Քաղքային խորհուրդը՝ մանաժողով մը ընտրեց, որ աս բանին վրայ խորհի: Մասնաժողովն որոշեց, որ պահէ ստորին վարժարանը՝ բայց զանկայ ուղղափառ Տուովմ. կաթողիկէ ստորին վարժարանաց կաղապարին Տամմաւ ընէ: Վերանսուլին վճարքն ըլլայ 800 ֆիրմին եւ բնակութիւն, Տինք կարգաւորեալ ուսուցիչներուն ըլլայ 600ական ֆիրմին եւ բնակարան, մէկ արտաքոյ կարգի գծագրութեան ուսուցիչ մը ըլլայ 500 ֆիրմինով եւ բնակարանով եւ վերջպէս՝ ծառայութիւն ընող մը 120 ֆիրմին տարեկան վճարքով:

Աղքատները Բալ՝ գլխաւոր վերատեսչին սոք կոխելն, այնչափ արդիւնք ունեցաւ, որ վարժոցն՝ ուրիշ յարմարագոյն տեղ մը փոխադրուեցաւ: Վաղմի ազգային զորաց զինուորանոցը՝ վարժարանի նպատակին յարմար կերպով մը՝ փոխուեցաւ: Քաղքն ուրիշ կողմանէ ալ ըսաւ իրեն կարելի եղածը: 1885ին, բարձրացուց վերատեսչին Տասնյժը 760 ֆիրմին:

եւ կարգաւորեալ ուսուցչացը՝ 660 ֆիորինի վակայն՝ հարկաւոր եղած նոր ուսումընէ մը տեղը չկրցաւ լեցուիլ, որովհետեւ Գամկէնի հիմնարկ-կուսիին՝ իր օգնութիւնը զնայաւ:

Ասկից ետքը՝ կարեւն թէ, վարժարանն ալ ինչպիսի պիտի լի, թէ նկատմամբ ուսանողաց ա թէ՛ նկատմամբ յատուաբարութեան: — Ու զարմանք չէ, Ալեւոր վերապետը՝ Յակովբ Մարգովիւնեան, թէպէտ մտաւորապէս կատարեալ զօրութեամբ, բայց մարմնապէս բոլորովին ինկած, ի վիճակի չէր այնպիսի կենդանութիւն արտադրելու, որ կարենար միջիլ, Նիդաւրեթութեան պիտի զարգացնէր: Բայց քաղաքներուն մէջ եղած դպրոցներուն հետ: Նոր ու գործունեայ մարդու մը հարկաւորութիւն կար, որպէս զի վարժարանը նորին կենդանւումար: 1887/88 տարւոյն մէջ վարժարանը նոր վարիչ ընդունեցաւ, յանձին Գրիգոր Լատայի: Գաղաքն ինք իրեն նոր իսնութիւն ընկելով՝ վերաստիւ վարժարն ըրաւ 1000 ֆիորին, կարգաւորեալ ուսուցիչներունը 800ական, իսկ տեղական ուսուցիչներունը՝ 660 ֆիորին: Կարեւն թէ տեսնուեցաւ ալ ասոր հետեւութիւնը: Աւսուցիչը՝ ամէն կորովութիւնն եւ զօրութիւնն իւր քանակեցնելով, բանն այնչափ բերին, որ ուսանողաց թիւը բարձրացաւ, եւ հոն՝ ուր որ տարինեով 41 ուսանողէ ուեկն չըցան գտնել, երեք տարւան մէջ՝ 66ի բարձրացան: — Բայց յայտնի է որ այսչափ թուով վարժարան մը չէր կրնար կանգուն մնալ:

Աս միջոցին կ'իյնայ այն գաղափարն որ վարժարանը տէրութեան յանձնուի: Մտածութիւնն աղէկ էր ու շատ կողմնակից գտաւ, բայց ինքիւն ուրիշ կողմանէ նկատելով՝ շատ հաստատողութեան ունեցաւ, մասնաւոր առնոց կողմանէ, որ կը վախճային թէ վարժարանին ազգայնութեան նկարագիրը պիտի կորսնցնէ, ու մէկտէ կողմանէ ալ լաւ գիտէին, թէ տէրութիւնը կրճատութեանն ուսման նկատմամբ շատ անտարբեր գրիք մը կը թառնէ: Տէրութիւնը՝ 1883ին, վարժարանաց համար հրատարակած նոր օրէնքներովն այնպիսի պահանջները ըրաւ, որոնց՝ Նիդաւրեթութեան պիտի զարգացնէր եւ ուրիշ կողմանէ ալ շատ բաներով ծանրաբեռնած հասարակութիւնը չէր կրնար համար պատասխանել: Համակրթութեան պաշտօնարանը՝ շարունակ կը ստիպէր զքաղաքն, որ իր վարժարանն՝ օրինաց պահանջած վիճակին մէջ խոթէ: Գաղաքային խորհուրդը մտանց, որ աս ընելու համար տարութեան օգնութիւն խնդրէ: — Արդէն 1885ին ապառքութեամբ ըրաւ իր

առաջին քայլերը, սակայն առանց օգուտ մը տեսնելու, որովհետեւ մէկ կողմանէ նոյն իսկ տէրութիւնը՝ դրամական նեղ վիճակի մէջ էր, ու մէկտէ կողմանէ վարժարանին մէջ տեսնուած անհոգութիւնն եւ ասանողաց՝ աչքի զարնող օտակաութիւնը, աս բանս գործարարելու անկարելի կ'ընէին:

Բայց վարժարանն տէրութեան ձեռքն անցնելով՝ միայն ժամանակի խնդիր էր, վասն զի յայտնի էր մէկ կողմանէ, որ քաղաքային հասարակութիւնն իր զօրութեամբ վարժարանը՝ պահանջուած դիրքին մէջ պահելու ի վիճակի չէր. եւ մէկտէ կողմանէ այնպիսի աչքի զարնող տեղւոյ մը վրայ կենցած դպրոցն ասուգիւ մեծ օգուտ կրնար ընել քաղաքակրթութեան — ուստիս էր զանկայ բոլորովին դարբնեցնել: Ուստի գլխաւոր վերատեսչին միջնորդութեամբ՝ քաղաքային վարչութիւնը տէրութեան աղբրապահի մը գրեց, — որուն վրայ կրննի եւ համակրթութեան պաշտօնարանն 1890ին, ծանոց քաղքին, որ իր աղաչանաց մէջ յառաջ բերած պատճառները տեսնելով եւ Նիդաւրեթութեան պաշտօնարանը երկրագրակի դիրքը նկատելով — որով վարժարանը առաքելութիւն մը պիտի կատարէ — միտեալ է անոր ապագային հոգ տանելու: — Պաշտօնարանին բանած դիրքը անով կը տարբերէր քաղքին հասարակութեան կարծիքէն, որ տէրութիւնն ուզեց իրեն յատկացնել զվարժարանը, ու անգիտէ քաղաքը՝ վարժարանն իրեն կուգէր պահել, ու տէրութեան միայն օգնութիւն խնդրել, որպէս զի զանկայ կարենայ պահպանել:

Տէրութիւնն իր յայտարարութեանը մէջ, քաղաքային հասարակութեան առջեւ դրաւ իր կողմանէ պայմաններն ալ զորոնք կը պահանջէր, — այսինքն թէ՛ քաղաքն ինք զինք պարտաւորէր, որ տէրութեան վարժարանին պահպանութեանը համար տարուն տարի 5000 ֆիորին օգնութիւն կու տայ — գալի գալուցէնեքը անտէրութեան կը յանձնէ, կը կտնցնէ վարժարանին համար, տէրութեան պահանջուած կորգաւորեալ շէնք մը եւ վերապէս, որ միանգամ ընդ միշտ կը գրեթատարէ զանկայ ամէն հարկաւոր եղած բաներով:

Ինչպէս ամէն նոր ու ծանրագոյն որոշում, անանկ ալ աս, քաղաքային հասարակութեան մէջ մեծ շարժում մը յառաջ բերաւ: Կարծիքները՝ տարբեր տարբեր էին: — Եւ ժամանակ մը, այնպէս կ'երեւար, թէ ստանալ պայմաններով միաբանութիւն երբեք պիտի չըլլայ

երկու կողման մէջ, Բայց եւ այնպէս որոշեց ինդիւր քաղաքային երգուելոց ժողովն 1891 յունուար 15ին, երբ վերոյիշեալ պաշտօններն ընդունեցաւ եւ իր որոշումն անմիջապէս պաշտօնարանին առիւր դրաւ: — Տէրութիւնը մարտ 16ի կարգադրութեամբ՝ ընդունեցաւ քաղքին որոշումն, ու կրօնի եւ Համակրթութեան պաշտօնեան յայտնեց թէ միտեալ է վերջնական դաշնագրութիւն ընել ու վարժարանն 1891 — 92 գառական տարւոյն սկիզբն իր ձեռքն առնուլ:

Պաշտօնէին կարգադրութեանը համեմատ, վարժարանն 1891 սեպտեմբեր մէկին՝ իրօք սկսաւ իր գործունէութիւնն իրեւ տէրութեան նոր վարժաց. թէպէտ եւ դաշնագրութիւնը սեպտեմբ. 11ին ստորագրուեցաւ, սակայն միայն երկու ամիս ետքն ընդունեցաւ իր վաւերականութիւնը:

Հունգարական-թագաւորական կրօնի եւ Համակրթութեան եւ Նշխարթութեան պաշտօնը հասարակութեան մէջ եղած դաշնագրութեան հայերէն թարգմանութիւնն է յաղորդը:

“Դաշնիք

Որ գրուեցաւ՝ մեծապատիւ հունգարական-թագաւորական ներքին գործոց պաշտօնէին 1891, մարտ 26ին, 19.028 թուով տուած հաւանութեամբը՝ — մէկ կողմանէ մեծապատիւ հունգարական թագաւորական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանին ու մէկաւ կողմանէ Նշխարթութեան պաշտօնը իր արտաքին թագաւորական քաղքին հասարակութեան մէջ, վարը նշանակուած կէտերուն եւ պայմաններուն համեմատ:

1. Նշխարթութեան պաշտ թագաւորական քաղքին հասարակութիւնն այս տեղ գտնուած ու իրեն յատուկ ստացուածքն եղած հոռոմ. ուղղափառ Թախիյէլեան ստորին վարժարանը՝ մշտնջենաւոր ժամանակաց համար, կու տայ, այսինքն կը ձգէ մեծապատիւ հունգարական-թագաւորական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանին տրամադրութեանը տակ:

2. Նշխարթութեան պաշտ թագաւորական քաղքը կը պարտաւորէ ինք զինք, որ առաջիկայ 1891 տարւոյն սեպտեմբեր մէկին՝ տէրութեան հոգատարութեանը տակ առնուած վարժարանին էջերուն օգնելու համար, տարուն տարի նուիրուած ու հունգարական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանէն ընդունուած 5000 ֆիորինէն, առաջիկայ տարւոյն սեպտեմբ.

դեկտեմբեր ամիսներուն համար 1866 ֆիորին ու 67 քրայցեր, այսինքն հազար վեցհաս իւրիւթաւուսու վեց ֆիորին եւ 67 քր. մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին կարգադրութեանը տակ կը ձգէ. — եւ սա գումարին վճարը հարկաւոր եղած վկայականներով կը վաւերացընէ:

3. Նշխարթութեան պաշտ թագաւորական քաղքին հասարակութիւնը կը պարտաւորէ ինք զինք, 1892 յունուար մէկին սկսելով, տէրութեան հոգատարութեանը տակ առնուած վարժարանի էջերուն ծախքերը գուցելու համար, ամէն քաղաքական տարւոյն մէջ — ամէն՝ մինչեւ հիմակ ունեցած եկամտի աղբիւրները գործածելով — 5000, այսինքն հինգ հազար ֆիորին տալու: Եւ ստոր համեմատ ազատութիւն կու տայ մեծապատիւ հունգ. թագաւորական պաշտօնարանին, որ առ տեղի հունգ. թագաւորական հարկապահանջութեան պաշտօնատունն՝ Նշխարթութեան պաշտօնը, փոխարինութեան տիտղոսով ունեցած ու 4 1/2 % հաւ իւրւշեալ շահաբեր 137,550 ֆիորին, այսինքն՝ հարիւր երեսունեօթը հազար ու հինգ հաւ իւրւ յիսուն ֆիորին արժող պարտաւորութիւն՝ 6089 ֆիորին եւ 74 քրայցեր բերող շահէն, ամէն՝ կէս տարիէ կէս տարի 2500 այսինքն՝ երկու հազար հինգ հարիւր ֆիորին ընող գումարն, առանց որեւէ պատճառի, իրեն պահէ, այսինքն, վար զարնէ: Ուստի ըստ այսմ իշխանութիւնն կը արդի հունգ. թագաւորական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանին, որ վերը յիշուած ըմպելիք ծախելու փոխարինութեան պարտաւորութիւն տուիտիքէն, որչափ ժամանակ որ Նշխարթութեան պաշտօնը տէրութեանը պարտաւորութեանը տակ կը մնայ, — 5000, այսինքն հինգ հազար ֆիորին, մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանին թերթին (Portefeuille) համար իրեն պահէ:

4. Նշխարթութեան պաշտ թագաւորական քաղքին հասարակութիւնը կը յանձնէ ու կու տայ մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ Համակրթութեան պաշտօնարանին՝ վարժարանին եկած դպրոցէներուն որ դպրոց մտնելու հասցիները:

5. Նշխարթութեան պաշտ թագաւորական քաղքը կը պարտաւորէ ինք զինք, որ վարժարանի համար, որչափ կարելի է ջուր, բայց ամենէն ուշ՝ ուրիշ տարւան միջոցի մէջ —

կամ մինչեւ 1899 տեւոյս. 1. — ամէն նկատմամբ յարմար եւ մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին, նախագիտ քննութեան տակ ձգուելի եւ իրմէն ընդունելի յատակագծին համեմատ, վարժարանի նոր շէնք մը կը կանգնէ. եւ զաւերիկայ — անոր վրայ ունեցած իրաւունքն իրեն յիշապահելով — տէրութեան կը յանձնէ. — եւ ամէն բարձրագոյն դպրոցի վերաբերեալ հարկաւոր ներքին զգեստաւորութիւններն իր յատուկ ծախքովը կը հոգայ:

6. Հիմապական շէնքն ու ամէն զգեստաւորութիւններն ու կահ կարասիքն, որոնք որ Ծերորդ կէտին համեմատ կրնան իրենց տեղէն վերցուիլ, եւ նոր վարժարանին մէջ պիտի չկարենան գործածուիլ՝ Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին տրամադրութեանը տակ կը ձգուին:

7. Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին հասարակութիւնը, վարժոցին՝ տէրութեան ձեռքն յանձնուելու օրէն, ուսուցիչներն անուանելու եւ վարչութեան՝ օրպիտի կերպով գործադրուելուն նկատմամբ, մեծապատիւ հունգարական թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին աղատ իշխանութիւն կու ապա:

8. Մեծապատիւ կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանն՝ Եղիսաբեթուպոլսոյ հոռվմ. ուղղ. Ռափայելեան վարժարանն 1891 տեւոյս. մէկէն սկսեալ՝ 1 — 7 կէտերուն մէջ տրուած պայմաններով՝ իր յատուկ հոգատարութեանը տակ կ'առնու:

9. Մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանը՝ վարժարանին ամէն ծախքերն իր վրայ կ'առնու:

10. Հիմապական վարժոցին շէնքին արտաքին մասին լաւ վիճակի մէջ պահպանութիւնն՝ Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին հասարակութիւնը հոգալու է: Ընդ հակառակն, շինուելի եւ հանդերձանքներով մէջ տեղ յանձնուելի նոր վարժարանին շէնքին լաւ վիճակի մէջ պահուիլն՝ քննչական նաեւ վարժոցին, հիմակ ունեցած եւ քաղքէն՝ կահագործով տէրութեան յանձնուելի հանդերձաւորութիւնները եւ կահ կարասին — հարկաւորութեան համեմատ — ամբողջացնելն ու պահպանելն՝ մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին իր վրայ կ'առնու:

11. Վերջապէս, եթէ տէրութեան մեծապատիւ հունգ. թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանը, ժամանակ անցնելով՝ աս տեղի վարժարանին հոգատարութեանն որեւէ պատճառի համար հրաժարի, ան ասոն Եղիսաբեթուպոլսոյ հասարակութիւնն իրաւունք ունի այն շէնքին՝ եւ տէրութեան ըրած հանդերձաւորութիւններուն վրայ, — ու 2 — 3 կէտերուն մէջ՝ եղած պարտաւորութիւններն ու պայմանները կը զագրին. եւ աս ամէն բան՝ քաղքին հասարակութեան, այն ասոնի վարչութեան տրամադրութեանը համեմատ պիտի գործածուին:

Առաջիկայ գաշնագրութիւնը՝ երեք հաւասար օրինակի մէջ հրատարակուելով՝ Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին կողմանէ, աս այս իշխանութիւնն ինքեցող յանձնակատարէն կը ստորագրուի, — իսկ կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին կողմանէ Տր. Յովսէփ Զօֆման, կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին քարտուղարին կողմանէ՝ իրեւ այս պաշտօնարանին յանձնակատարէն:

Աս գաշնագրութիւնը՝ միայն հունգարական թագաւորական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին վաւերացմամբ կ'ընդունի իր զօրութիւնը:

Տուեալ Եղիսաբեթուպոլսոյ քաղաքը, յամի Տեառն 1891 տեւոյս. 11/ին.

Մեր տալեւր.

Յովսէփ Զօֆման. յ. յ. իրեւ վրայ:

Եղիսաբեթուպոլսոյ. յ. յ. իրեւ վրայ:

Տր. Յովսէփ Զօֆման. յ. յ. հունգարական կրօնի եւ համակրթութեան պաշտօնարանին քարտուղարն. — իրեւ պաշտօնարանին յանձնակատար:

Սարգիս Եղիսաբեթուպոլսոյ ազատ թագաւորական քաղքին հասարակութեան տնօրէնն ու յանձնարարութեամբը:

Յովսէփ Ալֆրէտ. յ. յ. գլխաւոր քարտուղար:

Կ'ընդունիմ ու կը վաւերացնեմ.

Պետարմէշ, 1891, Նոյեմբ. 25:

Չափէ Կոմ, յ. յ. յ.

(Վերջը Բու տեւոյս.)

ՅՈՎԱ. ԱՆՆԻՍ